ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԱՐՈՆ Լ. ԶԱՔԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Զաքարյան.

Ի պատասխան Ձեր 15.03.2019թ. հ.01/177 գրության՝ տեղեկացվում է.

Երևանի քաղաքապետարանի 2019թ. ծրագրով ոռոգման ցանցերի կառուցման աշխատանքներ են նախատեսված թվով 6 հասցեներում, այդ թվում նաև «Հաղթանակ» զբոսայգու Բաբայան փողոցին կից հատվածում:

Միաժամանակ տեղեկացվում է, որ գրությամբ ներկայացված՝ «Հաղթանակ» զբոսայգուց իջնող ճանապարհների եզրագծով պարփակված հողատարածքներում, ոռոգման ցանցի կառուցման շինարարական աշխատանքները Երևանի քաղաքապետարանի 2020թ. ծրագրերում ընդգրկելու նպատակով, շինարարության և բարեկարգման վարչության ընթացիկ տարվա ծրագրերի շրջանակներում կպատվիրվեն աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ